



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԱՎ 2020Թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Ստեփանակերտ 2020

ԱՀ ԱՎԾ աշխատակազմի շրջանային բաժիններից գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի (հարցաթերթեր, հարցաթերթի հավելվածներ, ամփոփ տեղեկագրեր, ուղեկցող թերթեր) ընդունումը կատարվում է 2 փուլով:

ՓՈՒԼ I

Առաջին փուլն իրականացվում է ԱՀ ԱՎԾ նախագահի հրամանով ձևավորված ԱՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության նյութերի ընդունման հանձնաժողովի կողմից մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը:

ԱՀ ԱՎԾ շրջանային բաժիններում իրականացվում են տվյալ շրջանի ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի որակական ստուգումներ: Գործընթացը ներառում է.

- հաշվարարների պայուսակներում համապատասխան փաստաթղթերի դասավորվածության ստուգում,
- հարցաթերթերի, հարցաթերթի հավելվածի և ուղեկցող թերթերի լրացման ճշգրտության ստուգում,
- ամփոփ տեղեկագրերի և հաշվարարների հուշատետրերի համապատասխան տվյալների համապատասխանության ստուգում, դրանցում հանրագումարների ճշգրտության ստուգում,
- հարցաթերթերի լրացման ընտրանքային որակական ստուգումներ:

Հանձնաժողովի կողմից նյութերի ընդունման առաջին փուլի արդյունքներն արձանագրվում են համապատասխան շրջանի նյութերի որակական գնահատման փաստաթղթով:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ըստ հաշվային տեղամասերի պետք է գետեղված լինեն հաշվարարներին տրված պայուսակներում: Յուրաքանչյուր պայուսակում պետք է տեղադրված լինեն գյուղատնտեսական համատարած հաշվառման լրացված հարցաթերթերը, հարցաթերթի հավելվածները, հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրերը, հաշվարարի հուշատետրը, ուղեկցող թերթը, պայուսակի պիտակը:

Հանձնաժողովը, յուրաքանչյուր պայուսակի անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը ստուգելուց հետո, պետք է ստուգի յուրաքանչյուր պայուսակի ուղեկցող թերթում նշված հասցեային մասի և հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի պայմանանիշերի նույնությունը պայուսակի, հարցաթերթերի, տիտղոսաթերթերի և պայուսակի պիտակի համանուն տվյալների հետ:

ՓՈՒԼ II

ԳՀՀ վարչության տվյալների մշակման և վերահսկողության բաժնի կողմից ուղեկցող թերթի և պայուսակի պիտակի վրա լրացվում են համապատասխան աշխարհագրական ծածկագրերը, որից հետո նրանց կողմից լրացվում է տվյալ պայուսակի հերթական համարները ուղեկցող թերթի՝ «Պայուսակի հերթական համարը» համապատասխան հատվածում:

Յուրաքանչյուր պայուսակի ուղեկցող թերթի տվյալները գրանցվում են ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի ընդունման ցուցակում:

Չուգահեռաբար տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցների կողմից այդ ցուցակի տվյալները մուտքագրվում են համակարգիչ: Յուրաքանչյուր շրջանի նյութերի ընդունումից հետո հանձնաժողովի կողմից կազմվում է պայուսակների հանձնման-ընդունման ակտ, որը վավերացվում է ԱՀ ԱՎԾ շրջանային բաժնի պետի և ընդունող հանձնաժողովի անդամների կողմից:

ԳՀՀ վարչության աշխատակիցների կողմից պայուսակները տեղափոխվում են պահեստ, որտեղ դրանք դասավորվում են որոշակի կարգով՝ ըստ շրջանների, հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի: Այդ պահից սկսած գյուղատնտեսական համատարած հաշվառման պայուսակների պահպանության պատասխանատվությունն անցնում է գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության տվյալների մշակման և վերահսկողության բաժնին, այսինքն՝ հարցաթերթերն ըստ պայուսակների պատրաստ են տվյալների հետագա մշակման համար:

Բոլոր շրջաններից պայուսակներն ընդունելուց հետո համակարգչում ձևավորվում է ԱՀ շրջաններից հավաքված բոլոր պայուսակների տվյալների բազան՝ համապատասխան ծածկագրերով:

Ց ՈՒ Ց Ա Կ

ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի ընդունման

Շրջան _____

Բնակավայրի Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Հաշվառման տեղամասի համարը	Հրահանգ- չական տեղամասի համարը	Հաշվային տեղամասի համարը	Պայուսակի հերթական համարը հաշվառման տեղամասում	Դրանում	
							Հարցա- թերթերի քանակը	հարցաթեր- թի հավել- վածների քանակը
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>

ԱՀ ԱՎԾ աշխատակազմի շրջանային բաժնի պետ՝ _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն,)

ԱՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պետ՝ _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն,)

Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն Ա Կ Տ

ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմալլանի նյութերի

Շրջան _____

Ընդունվել են հետևյալ նյութերը

	<i>Շրջան</i>		Ընդամենը
	Հաշվառման տեղամաս N1	Հաշվառման տեղամաս N2	
Հաշվառման տեղամասերի քանակը			
Հրահանգչական տեղամասերի քանակը			
Հաշվային տեղամասերի քանակը			
ԳՀՀ հարցաթերթերի քանակը			
ԳՀՀ հարցաթերթի հավելվածների քանակը			
Ուղեկցող թերթերի քանակը (Ձև 5)			
Ամփոփ տեղեկագրերի թերթերի քանակը (Ձև 1)			
քաղաքային			
գյուղական			
Ամփոփ տեղեկագրերի թերթերի քանակը (Ձև 2)			
քաղաքային			
գյուղական			
Ամփոփ տեղեկագրերի թերթերի քանակը (Ձև 3)			
քաղաքային			
գյուղական			
Ձև 3-ի հավելվածի թերթերի քանակը			
Հաշվարարների հուշատետրերի քանակը			
քաղաքային			
գյուղական			
Հրահանգիչ-հսկիչների հուշատետրերի քանակը			
քաղաքային			
գյուղական			
Հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրերի քանակը			
քաղաքային			
գյուղական			
Շրջանի ամփոփ տեղեկագրերի թերթերի քանակը (Ձև 4)			
քաղաքային			
գյուղական			

Նյութերը հանձնեցին 1. _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն.)

Նյութերն ընդունեցին 1. _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն.)

2. _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն.)

2. _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն.)

Ց ՈՒ Ց Ա Կ

ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերի ընդունման

Շրջան _____

Բնակավայրի հ/հ	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Հաշվառման տեղամասի համարը Հրահանգչական տեղամասի համարը Հաշվառման տեղամասի համարը			Պայուսակի հերթական համարը հաշվառման տեղամասում	Դրանում	
							հարցաթերթի քանակը	հարցաթերթի հավելվածների քանակը
1	2	3	4	5	6	7	8	9

Շրջանային բաժնի պետ՝ _____ 2020 թ.
(Ա.Ա.Հ., ստորագրություն.)